

2347



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



«ՁՆ» 02 2025թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 046 - 25

Նախաձեռնող՝

«Ղարաքիլիսա» ՍՊԸ

ք. Վանաձոր, Տ. Մեծ 63/21

Գործունեությունը՝

Վեդի համայնքի Սիսավանի միջնակարգ  
դպրոցի կառուցում  
Արարաբի մարզ

Առդիր՝ 5 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ № 046 - 25**

**« 28 » փետրվարի 2025թ.**

**Վեղի համայնքի, Սիսավանի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «Ղարաքիլիսա» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ Արարատի մարզ, Վեղի համայնք, Սիսավան բնակավայր

**Ներածական մաս.** Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արարատի մարզի Վեղի համայնքի Սիսավան բնակավայրում, ամենամոտ բնակելի տնից 5 մետր, ճանապարհից 3 մ հեռավորության վրա:

Հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 -րդ կետի ա. ենթակետի:

**Նկարագրական մաս.** Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել 03-084-0025-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N25112016-03-0031 վկայականը, 2024 թվականի ապրիլի 2-ին Արարատի մարզի Վեղի համայնքի կողմից տրված N62 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Արարատի մարզի Վեղի համայնքի Սիսավանի միջնակարգ դպրոցի կառուցապատման համար հատկացվելու է 2,18903 հա տարածք: Ընդհանուր կառուցապատման մակերեսը կկազմի 5746մ<sup>2</sup>: Բարեկարգվող մակերեսը՝ 10507 մ<sup>2</sup>, այդ թվում ասֆալտապատման մակերեսը՝ 2300մ<sup>2</sup>: Կանաչապատ մակերեսը՝ 6275մ<sup>2</sup>, բրեկչա՝ 1932 մ<sup>2</sup>: Մնացած 5570 մ<sup>2</sup> տարածքը որևէ փոփոխության չի ենթարկվելու:

Գոյություն ունեցող դպրոցի շենքը նախատեսվում է քանդել: Ներկայումս տարածքում առկա են դպրոցի շենքը՝ 4256,3 մ<sup>2</sup>, կաթսայատունը՝ 139,15 մ<sup>2</sup>, էլեկտրատեղակայանը՝ 8,9 մ<sup>2</sup>, զուգարանը՝ 30,6մ<sup>2</sup>: Նախագծով նախատեսված է մյուս դպրոցի շենքի քանդում, գոյություն ունեցող մյուս շենքերը քանդման ենթակա չեն: Դպրոցը նախատեսված է 350 աշակերտների



համար, որից տարրական օդակի 16 աշակերտի համար նախատեսված է 5 դասասենյակ, 25 աշակերտի համար նախատեսված է 2 դասասենյակ, միջին օդակի 15 աշակերտի համար 4 դասասենյակ 25 աշակերտի համար 4 դասասենյակ: Ավագ դպրոցը կազմված կլինի 6 դասարանից՝ մինչև 12 աշակերտների համար: Նախագծվող դպրոցը բաղկացած կլինի հիմնական 4 մասնաշենքերից: 1-ին՝ ուսումնական մասնաշենքը կլինի եռահարկ, 2-րդ մասնաշենքը՝ ադմինիստրատիվ բլոկն ու դահլիճը նախատեսված է երկհարկ, 3-րդ մասնաշենքը ճաշարանային մասնաշենքը կլինի, 4-րդ մասնաշենքը մարադահլիճը: Դպրոցն ապահովված կլինի նաև նկուղային հարկում տեղակայված պարզագույն թաքստոցով: Դպրոցի շենքը հարմարեցված է հաշմանդամություն ունեցող անձանց հասանելիության համար՝ մասնավորապես նախագծված են թեքահարթակներ՝ դեպի դպրոց մուտքն ապահովելու համար: Բոլոր հարկերում կառուցված են հատուկ հաշմանդամների համար հարմարեցված սանհանգույցներ:

Շինարարական աշխատանքները կազմակերպվելու են երկու փուլով՝ քանդման փուլ և կառուցման փուլ: Քանդման փուլը տևելու է 2 ամիս: Կատարվելու է տանիքի ասբոշիֆերի՝ 2600.0 մ<sup>2</sup>, փայտե հիմնակմախքի՝ 82.0 մ<sup>3</sup> քանդում՝ երկաթբետոնե ծածկի հավաքովի սալերի քանդում՝ 4680.0 մ<sup>3</sup>, երկաթբետոնե միաձույլ ծածկի սալերի քանդում՝ 150.0 մ<sup>3</sup>, երկաթբետոնե պատի պանելների ապամոնտաժում՝ 1008.0 մ<sup>2</sup>, երկաթբետոնե հեծանների և սյուների քանդում՝ 430.0 մ<sup>3</sup>, փայտե դռների և պատուհանների քանդում՝ 720.0 մ<sup>2</sup>, հատակների քանդում՝ 250.0 մ<sup>3</sup>, բետոնե հիմքերի քանդում՝ 375.0 մ<sup>3</sup>, երկաթբետոնե հիմքերի քանդում՝ 110.0 մ<sup>3</sup>, միջնորմների քանդում՝ 300.0 մ<sup>3</sup> քարե պատերի քանդում՝ 43.0 մ<sup>3</sup>, շին աղբի բարձում և տեղափոխում՝ 2900.0 տ:

Քանդման ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 2900 տ ծավալով, և հեռացման ենթակա հողային գրունտ՝ 2710,9 մ<sup>3</sup> ծավալով: Շինարարության ընթացքում առաջանալու է նաև 6300 կգ/տարի կենցաղյին աղբ: Շինարարության և շահագործման փուլում աղբահեռացումը նախատեսվում է իրականացնել դպրոցի տարածքից 8-10 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:

Շինարարության փուլը տևելու է 18 ամիս: Շինմոնտաժային աշխատանքների իրականացման փուլը տևելու է 11,6 ամիս:

Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Իրականացվելու է շինարարական հրապարակի ժամանակավոր պարսպապատում:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ:

Գործունեության ընթացքում կատարվելու է ընդհանուր 3597,6 մ<sup>3</sup> ծավալով հողային աշխատանքներ, որից 886,7մ<sup>3</sup> ծավալով հողային զանգվածը հետլիցք է արվելու, մնացած 2710,9 մ<sup>3</sup> ծավալի հողային զանգվածը, տեղափոխվելու է համայնքի կողմից տրամադրված աղբավայր:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ մոտակա էլեկտրական ենթակայանից, տեղադրելով առանձին հաշվիչ:

Գազամատակարարումն իրականացվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից տրամադրված տեխ պայմանի:

Աշխատողների խմելու ջրի և կենցաղային նպատակների համար օգտագործվելու է գործող դպրոցի տարածքում առկա ենթակառուցվածքները: Զրամատակարարումն իրականացվելու է համաձայն՝ «Վելիա Զուր» ՓԲԸ –ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Շինարարության փուլում աշխատողների կենցաղային կարիքները հոգալու նպատակով տեղադրվելու է



բիոզուգարան՝ լվացարանով: Ջրցանի և կենցաղային նպատակներով նախատեսվող ջուրը կբերվի ջրցանի համար նախատեսված ավտոցիստեռնով՝ համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների կամ անձանց միջոցով, որոնց հետ կկնքվի պայմանագիր/ներառելով ջրառի կետը/: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և մեքենաների անիվների լվացման համար: Տաք ջրամատակարարման համար կաթսայատանը նախատեսված է 450 լ ծավալով բոյլեր: Կաթսայատանը նախատեսված է օդափոխության բնական ներածման և արտածման համակարգեր: Գազամատակարարման դադարեցման դեպքում, որպես պահուստային վառելիք ընտրված է հեղուկ վառելիք: Շինարարության փուլում տեղադրվելու է նաև 5 տոննա տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով:

Կեղտաջրերի հեռացման նպատակով շինարարության փուլում կտեղադրվի բիոզուգարան: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Շահագործման փուլում կոյուղու ելքը հաշվարկված է 3.251 լ/վրկ: Դպրոցում գոյություն ունեն բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները, այդ թվում կոյուղու ցանց, հեղեղատար համակարգ:

Մասնաշենքերը կառուցելուց հետո տարածքը ցանկապատվելու է 2,8 մ բարձրության մետաղյա ճաղավանդակով՝ դարպասներով՝ ապահովված արտաքին լուսավորությամբ:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում: Նախատեսվում է կառուցապատումից ազատ հատվածներում կատարել կանաչապատման աշխատանքներ: Ոռոգումը կատարվելու է Փ40 պոլիէթիլենային խողովակներով՝ կաթիլային եղանակով: Կանաչապատման նպատակով նախատեսվող բուսահողը բերվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության հիման վրա՝ համապատասխան թույլտվություններ և համաձայնություններ ստանալուց հետո:

### **Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,
- շինհրապարակը ցանկապատվելու է համապատասխան բարձրության ցանցաթաղանթով,
- շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,
- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,
- իրականացվելու է շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ,
- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան, իսկ անիվների լվացումից առաջացած հոսքաջրերը՝ բիոզուգարան,
- ջրցանի համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,



- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինադրի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվելու դրանց աղմուկի մակարդակին: Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
- տանիքի քանդումից առաջացած ասբոշիֆերը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին, բացառելով բաց տարածքներում դրանց տեղակայումը,

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Մթնոլորտային օդի, կենսաբազմազանության, աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին աշխատողների իրազեկման, շինարարական նորմերի պահպանման, Աղմուկի, թրթռման մակարդակի, շինանյութերի արտոնագրված մատակարարներից գնման, թափոնների հաշվառման, հեռացման, շինտեխնիկայի և տրանսպորտային միջոցների, Կանաչապատման և բարեկարգման, բողոքների արձագանքման, կանաչապատ տարածքի մշտադիտարկումներ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արարատի մարզի, Վեդի համայնքի Սիսավան բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Արարատի մարզի Վեդի համայնքի Սիսավան բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն ինչպես նաև Արարատի մարզպետարանը և Վեդու համայնքապետարանը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

**Փորձաքննական պահանջներ**

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում **խստագույն** հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների



իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:

3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վեդու համայնքապետարանի հետ համաձայնեցված:

5. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:

6. Պարսպապատել շինարարական հրապարակները իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով: Թափոնների տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վեդու համայնքապետարանի հետ համաձայնեցված:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Նարաքիլիսա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Վեդի համայնքի, Սիսավանի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան